ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1349-29.04.2026-ՖՎ-012/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1349-29.04.2026-ՖՎ-012/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծի առաջին չհամարակալված պարբերությունում «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության» բառերն առաջարկում ենք փոխարինել «Սահմանադրության» բառով, իսկ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը» բառերը՝ «Ազգային ժողովը» բառերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ «2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:

2. Նախագծի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերում կիրառված «դրամ» բառերն առաջարկում ենք փոխարինել «հայկական դրամ» բառերով՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հասկացությունը, այն է՝ «Հայաստանի Հանրապետության արժույթը հայկական դրամն է: (…)»: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթից:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված առաջարկությունների հիման վրա ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)
13.05.2026թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող Ազգային ժողովի այլ որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող Ազգային ժողովի այլ որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)
13.05.2026թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ (փաստաթղթային կոդ՝ Կ-1349-29.04.2026-ՖՎ-012/0)

ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը» (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացված է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Համաձայն Հաշվետվության, ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 2,887 մլրդ. դրամ, ծախսերը՝ 3,305 մլրդ. դրամ, իսկ բյուջեի դեֆիցիտը՝ 418.8 մլրդ. դրամ:

Սույն Հաշվետվության առումով, կարծում ենք, հատկանշական կարելի է համարել հետևյալ տեղեկություններն ու միտումները:

1. 2025 թվականին գրանցվել է ՀՆԱ-ի 7.2% իրական աճ, ինչը կարելի է բավարար նախադրյալ դիտարկել տնտեսության հետագա զարգացման համար՝ հատկապես համաշխարհային տնտեսության զարգացման համատեքստում: Մասնավորապես, 2025 թվականին համաշխարհային տնտեսական աճը կազմել է 3.3%, ընդ որում՝ ԱՄՆ տնտեսությունը գրանցել է 2.1%, Եվրագոտու տնտեսությունը՝ 1.4%, Չինաստանի տնտեսությունը՝ 5%, իսկ Ռուսաստանի տնտեսությունը՝ 1% աճ:

2. Հաշվետու ժամանակաշրջանում գրանցված տնտեսական աճն առավելապես պայմանավորված է եղել ծառայությունների և շինարարության աճով՝ (նպաստումները՝ համապատասխանաբար 3.6 և 1.5 տոկոսային կետեր): Տնտեսության մյուս ճյուղերը ևս աճել են՝ նպաստելով տնտեսական աճին (արդյունաբերություն՝ 0.6 և գյուղատնտեսություն՝ 0.4 տոկոսային կետեր):

3. 2025 թվականին սպառումն իրական արտահայտությամբ աճել է 9.9%-ով՝ պայմանավորված մասնավոր սպառման աճով: Մասնավոր սպառման աճին նպաստել են բնակչության տնօրինվող եկամտի և սպառողական վարկավորման աճերը:

Հաշվետու տարում կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 15.6%-ով՝ պայմանավորված մասնավոր ներդրումների աճով: Վերջինիս վրա դրական ազդեցություն են ունեցել հիպոտեկային և շինարարության վարկերի ծավալների աճը:

2025 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները նվազել են 30.5%-ով, իսկ ներմուծման իրական ծավալները՝ 23.7%-ով՝ պայմանավորված վերամշակման և վերաարտահանման նպատակով ներմուծված թանկարժեք մետաղների ներմուծման գործոնի թուլացմամբ:

4. 2025 թվականին 12 ամսյա գնաճը և միջին գնաճը կազմել են 3.3%, իսկ բնականոն գնաճը՝ 4.3%: Միջին գնաճին առավելապես նպաստել է «Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբում արձանագրված 5% գների աճը (նպաստումը գնաճին՝ 2.0 տոկոսային կետ), ինչը հիմնականում պայմանավորված է եղել բանջարեղեն, յուղեր և ճարպեր, մրգեր ապրանքատեսակների գների նպաստումներով: «Ծառայություններ» ապրանքախմբում արձանագրված 3% գների աճը (նպաստումը գնաճին՝ 1.0 տոկոսային կետ) պայմանավորված է եղել տրանսպորտի ծառայությունների (մասնավորապես՝ օդային մարդատար տրանսպորտի ծառայությունների) և բարձրագույն կրթության ծառայությունների սակագների նպաստումներով: «Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրատեսակներ» խմբում արձանագրվել է 6% գնաճ (նպաստումը գնաճին՝ 0.3 տոկոսային կետ), իսկ «Ոչ պարենային ապրանքներ» խմբում՝ 0.1% գնաճ:

5. 2025 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատությամբ վատթարացել է՝ կազմելով ՀՆԱ-ի 7.2%-ը: Այն հիմնականում պայմանավորված է ապրանքների հաշվեկշռի վատթարացմամբ, ինչպես նաև ծառայությունների հաշվեկշռի և զուտ դրամական փոխանցումների դերի նվազմամբ: Տնտեսություն ներհոսող դրամական զուտ փոխանցումները 2025 թվականին աճել են շուրջ 4.3%-ով՝ պայմանավորված ներհոսքի աճով (հատկապես՝ ՌԴ-ից): Նշված զարգացումների արդյունքում 2025 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդը վատթարացել է 2.6 տոկոսային կետով:

2025 թվականին գրանցվել է արտաքին ապրանքաշրջանառության անկում՝ հիմնականում պայմանավորված վերաարտահանման ծավալների նվազմամբ: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2025թ. կազմել է 21,430 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 29%-ով: Հաշվետու տարում արձանագրվել են դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման անկումներ. արտահանումը նվազել է

36.1%-ով՝ կազմելով 8,395 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 23.6%-ով՝ կազմելով 13,035 մլն ԱՄՆ դոլար: 2025թ. ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը նախորդ տարվա նկատմամբ վատթարացել է 18.1%-ով և կազմել 4,640 մլն ԱՄՆ դոլար:

2025 թվականին ներմուծման՝ դոլարային արտահայտությամբ ծավալների նվազմանն ամենամեծ նպաստումն է ունեցել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (12 տոկոսային կետ՝ վերաարտահանմամբ պայմանավորված) ապրանքախումբը: Ներմուծման նվազմանը հակազդել և դրական նպաստում են ունեցել «Պատրաստի սննդի արտադրանք» (1.3 տոկոսային կետով), Հանքահումքային արտադրանք» (0.5 տոկոսային կետով) և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» (0.5 տոկոսային կետով) ապրանքախմբերը:

6. 2025 թվականին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ միջինում արժևորվել է՝ պայմանավորված արտարժույթի ներհոսքի ավելացմամբ, իսկ ՌԴ ռուբլու և եվրոյի նկատմամբ արժեզրկվել է: ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորումը կազմել է 1.5%, ռուբլու նկատմամբ դրամի արժեզրկումը կազմել է 8.6%, եվրոյի նկատմամբ՝ 2.7%:

7. 2025 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 2,887 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.9%-ով, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 25.5%՝ նախորդ տարվա 25.3%-ի դիմաց:

Պետական բյուջեի ծախսերը կազմել են 3,305 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.8%-ով: Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2024 թվականի նկատմամբ ավելացել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 29.2%:

ՀՆԱ-ի նկատմամբ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 3.7%՝ նախորդ տարվա համեմատ մնալով անփոփոխ: ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 47.3%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 0.7 տոկոսային կետով:

ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

8. ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով տարեկան եկամուտները սահմանվել էին 2,838 մլրդ դրամ: Տարվա ընթացքում պետական բյուջեի ցուցանիշներում ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում կատարվել են փոփոխություններ: Մասնավորապես, Կառավարությունն իր լիազորությունների շրջանակում վերանայել է պետական բյուջեի եկամուտների ցուցանիշը՝ ընդհանուր առմամբ ավելացնելով 10.6 մլրդ

դրամով (0.4%-ով): Ծրագիրը 14.3 մլրդ դրամով ավելացվել է այլ եկամուտների գծով՝ հիմնականում պայմանավորված նախորդ տարիներին պետական բյուջեից ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարների (բացառությամբ փոխառու միջոցների) վերադարձից լրացուցիչ մուտքերով, իսկ հարկային եկամուտների և պետական տուրքերի ծրագիրը նվազեցվել է 1.9 մլրդ դրամի չափով՝ հիմնականում պայմանավորված օրենսդրական փոփոխություններով և հարկաբյուջետային ռիսկերի կառավարման պահուստի համար նախատեսված միջոցների նվազեցմամբ, ավելի քան 1.8 մլրդ դրամի չափով նվազեցվել է պաշտոնական դրամաշնորհների ծրագիրը՝ հիմնականում պայմանավորված նպատակային ծրագրերի կատարողականով:

2025 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 2,887 մլրդ դրամ՝ ապահովելով հաստատված տարեկան ծրագրի 101.7% կատարողական, իսկ Կառավարության կողմից ճշտված ծրագրի՝ 101.3% կատարողական: Նշված գումարից 2,876 մլրդ դրամը դրամը կազմել են ներքին աղբյուրներից ստացված եկամուտները, որոնք 2.1%-ով գերազանցել են սկզբնական և 1.6%-ով՝ ճշտված ծրագրային ցուցանիշը, 10.7 մլրդ դրամը ստացվել է պաշտոնական դրամաշնորհների գծով՝ ապահովելով սկզբնական ծրագրի 51.4%-ը և ճշտված ծրագրի 56.4%-ը: 2024 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտների գծով արձանագրվել է 11.9% (307.3 մլրդ դրամ) աճ՝ պայմանավորված հարկային եկամուտների և պետական տուրքերի աճով:

2025 թվականին պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 25.5%՝ բյուջեով կանխատեսված 26.1%-ի և նախորդ տարվա 25.3%-ի դիմաց:

9. Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են շուրջ 2,725 մլրդ. դրամ, որոնք 100.2%-ով ապահովել են օրենքով հաստատված ցուցանիշը և 100.3%-ով՝ ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը: 2024 թվականի համեմատ հարկային եկամուտներն ու պետական տուրքերն աճել են 14%-ով կամ 334.3 մլրդ դրամով: 2024 թվականի համեմատ հարկատեսակների մեծ մասի գծով արձանագրվել է մուտքերի աճ: Հարկ է նշել, որ 2025 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա դրական ազդեցություն են ունեցել տնտեսական ակտիվության աճը, աշխատատեղերի ու միջին աշխատավարձի ավելացումը, հարկման դրույքաչափերի բարձրացումը, հարկային վարչարարության արդյունքում ստվերային շրջանառությունների հայտնաբերման շնորհիվ հարկման բազաների տեղափոխումը հարկման դաշտ: Միաժամանակ, 2025 թվականին պետական բյուջեի եկամուտներից ԱԱՀ-ի, եկամտային

հարկի, ակցիզային հարկի և սոցիալական վճարների գծով իրականացվել են 313.5 մլրդ դրամ գումարների վերադարձ: Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը 2025 թվականին կազմել է 24.1%, որը 0.9 տոկոսային կետով զիջել է կանխատեսված ցուցանիշը և 0.6 տոկոսային կետով՝ գերազանցել 2024 թվականի փաստացի ցուցանիշը:

10. 2025 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 33.6%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 914.3 մլրդ դրամ: Նշված գումարից 476.3 մլրդ դրամը ստացվել է ներմուծման հարկումից, 438.0 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համեմատ ԱԱՀ-ի մուտքերն աճել են 158.4 մլրդ դրամով՝ պայմանավորված ինչպես ՀՀ-ում արտադրվող ապրանքների ու ծառայությունների շրջանառության, այնպես էլ ներմուծման գծով մուտքերի աճով:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 6%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 164.3 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 74.5 մլրդ դրամ, իսկ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 89.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ ակցիզային հարկի մուտքերի 17.8 մլրդ դրամի չափով աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ ներմուծվող (բացառությամբ ԵԱՏՄ անդամ պետություններից) ապրանքների ծավալների աճով:

2025 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 14.7%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ 401.5 մլրդ դրամ և 19.6%-ով (65.8 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Շահութահարկի գծով պետական բյուջեի մուտքերի վրա իր ազդեցությունն է ունեցել ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների շահութահարկի և աղբյուրի մոտ պահվող ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազաների աճը: Մասնավորապես, 2025 թվականին ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների համախառն եկամուտները կազմել են 20,710 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 20.3%-ով կամ 3,502 մլրդ դրամով: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների 2025 թվականի հարկվող շահույթը կազմել է 1,909 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 14.4%-ով կամ 240.3 մլրդ դրամով: Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների՝ աղբյուրի մոտ պահվող 2025 թվականի

եկամուտները կազմել են 33.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 31.2%-ով կամ 8 մլրդ դրամով՝ պայմանավորված շահութահարկի տարբեր դրույքաչափերով հարկվող և աղբյուրի մոտ պահվող եկամուտների հարկման բազաների աճով: Ոլորտային մակարդակով շահութահարկի մուտքերի վրա դրական ազդեցություն է գործել բանկային ոլորտի հարկ վճարողների կողմից վճարված շահութահարկի գումարների աճը, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերի շահույթների աճով:

Հաշվետու տարում 726.9 մլրդ դրամ են կազմել եկամտային հարկի մուտքերը՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 26.7%-ը: Նախորդ տարվա համեմատ եկամտային հարկի 11.8% (76.8 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է 2025 թվականին աշխատատեղերի և միջին աշխատավարձերի աճով: Մասնավորապես, 2025 թվականին գրանցված աշխատատեղերի թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 5.19%-ով, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձը՝ 5.15%-ով: Նշված երկու գործոնների համադրմամբ՝ եկամտային հարկի հարկման բազայի նպաստումը եղել է 10.6%: Միաժամանակ, եկամտային հարկի մուտքերի վրա բացասական ազդեցություն է ունեցել վերադարձված գումարների աճը:

2025 թվականին պետական բյուջե մուտքագրված մաքսատուրքը կազմել է 75.2 մլրդ դրամ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 2.8%-ը: 2025 թվականի ընթացքում ԵԱՏՄ երկրներից (այդ թվում՝ ՀՀ-ից) մաքսատուրքերի բաշխման արդյունքում ստացվել են 69.5 մլրդ դրամ մուտքեր: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքերի գծով մուտքերը նվազել են 1.3%-ով կամ 957.4 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 2.9%-ն ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 79.2 մլրդ դրամ և 30.1%-ով (18.3 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ շրջանառության հարկի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխությունների արդյունքում դրույքաչափերի բարձրացմամբ և տնտեսական ակտիվության աճով այն ոլորտներում, որտեղ գործում են շրջանառության հարկով հարկվող գործունեություն ծավալող հարկ վճարողները:

2025 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 2.6%-ն ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի հաշվին: 2025 թվականին դրանց գծով մուտքերը կազմել են 71 մլրդ դրամ 2024 թվականի 100.5 մլրդ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ մուտքերի նվազումը հիմնականում պայմանավորված

է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի գծով մուտքերի նվազմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում 116.5 մլրդ դրամ են կազմել սոցիալական վճարները, 51.1 մլրդ դրամ՝ դրոշմանիշային վճարները, 9.7 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 6.4 մլրդ դրամ՝ ճանապարհային հարկի գծով փաստացի մուտքերը:

11. 2025 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 95.8 մլրդ դրամ պետական տուրքեր՝ 15.3%-ով գերազանցող կանխատեսված ցուցանիշը և 19%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Դա հիմնականում պայմանավորված է եղել լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար սահմանված պետական տուրքերի բարձր ցուցանիշով:

12. 2025 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 10.7 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ: Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշորհները նվազել են 60.1%-ով կամ 16.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված բյուջետային աջակցության դրամաշնորհների նվազմամբ:

13. 2025 թվականին ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 150.6 մլրդ դրամ՝ 35.8%-ով գերազանցելով տարեկան ծրագրված ցուցանիշը: Գերազանցումը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարների, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացված մուտքերի ծրագրային ցուցանիշների գերազանցմամբ:

ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

14. 2025 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 3,305 մլրդ դրամ: Պետական բյուջեի ծախսերի տարեկան ճշտված ծրագիրը կատարվել է 95.8%-ով,

շեղումների ընդհանուր գումարի 47.1%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 52.9%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 98.6%-ը կամ 3,258 մլրդ դրամը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 96.2%-ով: Բյուջեի ծախսերի 1.4%-ը՝ 47 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է տարեկան ծրագրի 75.4%-ը:

Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 11.8%-ով կամ 350 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված կապիտալ ծախսերի, սոցիալական նպաստների և կենսաթոշակների, այլ ծախսերի և տոկոսավճարների աճով:

15. ՀՀ 2025 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 2,613 մլրդ դրամ: Հաշվետու տարում շուրջ 258.1 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն աճել են 15.4 մլրդ դրամով:

16. 2025 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 702.5 մլրդ դրամ: Ծրագրից 9.9% (76.4 մլրդ դրամ) շեղումը հիմնականում պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերով (կապիտալ ծախսերով):

ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

17. ՀՀ 2025 թվականի պետական բյուջեն կատարվել է է 418.8 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ծրագրի 69.6%-ը և 11.3%-ով (42.7 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

2025 թվականին պակասուրդի համեմատաբար ցածր մակարդակ է արձանագրվել ՀՆԱ-ի նկատմամբ, որը կազմել է 3.7%՝ կանխատեսված 5.5%-ի դիմաց, և նախորդ տարվա համեմատ մնալով անփոփոխ:

2025թ. պակասուրդի 67.1%-ը ֆինանսավորվել է ներքին աղբյուրների, 32.9%-ը՝ արտաքին աղբյուրների հաշվին:

18. 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,542 մլրդ դրամ (14.5 մլրդ ԱՄՆ դոլար): ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ ՀՀ պետական պարտքի ցուցանիշների աճերը նախորդ տարեվերջի համեմատությամբ կազմել

են համապատասխանաբար 8.8% և 13.2%: ՀՀ պետական պարտքում 2,683 մլրդ դրամը (7 մլրդ ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 2,858 մլրդ դրամը (7.5 մլրդ ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա համեմատ դրամային արտահայտությամբ աճել է 448.9 մլրդ դրամով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 1.7 մլրդ ԱՄՆ դոլարով: ՀՀ պետական պարտքի աճը պայմանավորված է ՀՀ կառավարության պարտքի աճով՝ համապատասխանաբար 9.4%-ով և 13.8%-ով:

ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը պետական պարտքի ծավալում կազմել է 96.6%, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի կշիռը՝ 3.4%:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 49%-ը՝ նախորդ տարեվերջի համեմատ նվազելով 1 տոկոսային կետով: Ընդ որում, Կառավարության պարտքը կազմել է ՀՆԱ-ի 47.3%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.7 տոկոսային կետով:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ
Կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան (Հեռ.՝ 011 513-603)
14.05.2026թ.

Սոցիալական փոխաքննության արդյունքները

ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը» (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացված է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և «Հայաստանի Հանրապետության

բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Ներկայացվող Հաշվետվության առումով, կարծում ենք, հատկանշական կարելի է համարել հետևյալ տեղեկություններն ու միտումները:

		2024թ. փաստ	ՀՆԱ-ի մեջ (%)	2025թ. ճշտված պլան	2025թ. փաստ	ՀՆԱ-ի մեջ (%)	Կատարողա-կան ճշտված պլանի նկատմամբ (%)	2025թ. 2024թ.-ի նկատ-մամբ (%)
	Ընդամենը ծախսեր	**2,955.3**	**29.0**	**3,449.8**	**3,305.3**	**29.2**	**95.8**	**111.8**
	Առողջապահություն	154.8	1.5	172.7	165.8	1.5	96.0	107.1
	Հանգիստ, մշակույթ և կրոն	40.5	0.4	49.6	42.8	0.4	86.2	105.6
	Կրթություն	231.0	2.3	337.3	319.6	2.8	94.8	138.4
	Սոցիալական պաշտպանություն	851.9	8.4	900.5	873.7	7.7	97.0	102.6

1. Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը 2025թ. կազմել են 873.7 մլրդ դրամ և ապահովել 97% կատարողական: Շեղումը հիմնականում արձանագրվել է «Ծերություն», «Ընտանիքի անդամներ և զավակներ» և «Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերի չպատկանող)» դասերում: 2025թ. տնտեսական հարաբերությունների ոլորտի ծախսերը կազմել են 212.5 մլրդ կամ ծրագրված ցուցանիշի 90.7%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է «Ճանապարհային տրանսպորտ» և «Ոռոգում» դասերում: Ճանապարհային տրանսպորտի դասի ծախսերը կատարվել են 86.6%-ով՝ կազմելով 105.2 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և

ԱԶԲ աջակցությամբ իրականացվող քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարության և ծախսերի կատարողականներով: Ռոգման դասի ծախսերը կազմել են 18.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 79%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է ,ԳԶՎԲ աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգումե և «Փոքր և միջին ջրամբարների կառուցում» միջոցառումների ծախսերով: Աղքատության մակարդակը շարունակել է նվազել՝ 2023թ. 23.7%-ից 2024թ. կազմելով 21.7%, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 1.1%-ից 0.6%՝ շնորհիվ վերջին տարիներին Հայաստանում արձանագրված մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման, տնտեսական աճի և հասցեական սոցիալական քաղաքականությունների: Թիրախային ցուցանիշը 2027թ. համար կազմում է բնակչության ծածկույթի ոչ ավելի, քան 16%ը:

Ծայրահեղ աղքատության վերացման նպատակով շարունակվել են ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների և դրանց ուղեկցող ծառայությունների տրամադրումը, միաժամանակ իրականացվել են օրենսդրական լայնածավալ փոփոխություններ: 2025թ. հունվարի 9-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 27-Ն որոշումը, որով սահմանվում են անապահովության գնահատման նոր համակարգի տրամադրման կարգը և պայմանները: 2025թ. մարտի 17-ից համակարգը ներդրվել է ՀՀ Կոտայքի և Սյունիքի մարզերում, իսկ 2026թ. հուլիսի 1-ից կներդրվի ամբողջ հանրապետությունում:

2025թ. ընթացքում շարունակվել է ՀՀ կառավարության 2020թ. մայիսի 14-ի N 968-Լ որոշմամբ հաստատված՝ Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2024-2026թթ. ծրագիրը: 2025թ. աջակցություն է ստացել 3,063 շահառու, և վճարվել է շուրջ 2.5 մլրդ դրամ: 2020թ. հուլիսի 1-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում աջակցություն է ստացել 15,184 շահառու: Ընդհանուր առմամբ վճարվել է շուրջ 11.1 մլրդ դրամ:

2025թ. ընթացքում շարունակվել է ՀՀ սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2025թթ. ծրագիրը, որը նպատակ ունի աջակցել ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանը՝ համապատասխան պայմաններ ապահովելով սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների կայուն զարգացման համար:

Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2025թ. շարունակվել է Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը, որի նպատակն է Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալական և տնտեսական ներառումը՝ ՀՀ-ում երկարաժամկետ բնակության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու միջոցով: ՀՀ կառավարության 03.07.2025թ. թիվ 901-Լ որոշմամբ ծրագրի շրջանակում իրականացվել են բարեփոխումներ, որոնք էապես բարձրացրել են ծրագրի արդյունավետությունն ու դիմելիությունը: 30.12.2025թ. դրությամբ հավաստագիր է ստացել 4,012 շահառու, որից 1,751-ն իրացրել է հավաստագիրը: 2025թ. ծրագրի տարբեր բաղադրիչների շրջանակում պետական բյուջեից վճարվել է շուրջ 3 մլրդ դրամ:

2025թ. կենսաթոշակային ապահովության ոլորտում իրականացված աշխատանքներն ուղղված են եղել օրենսդրության կատարելագործմանը, վերանայվել է նաև անկանխիկ վճարումների դեպքում կենսաթոշակառուներին և նպաստառուներին հետվճար տրամադրելու միջոցառումը:

2025թ. մեկ շահառուի գծով միջին հետվճարի չափը կազմել է 4,118 դրամ: 2025թ. հետվճար է վճարվել միջինում 330,455 շահառուի: Միջոցառման մեկնարկից սկսած՝ կենսաթոշակային քարտերով կատարվել է ավելի քան 342.2 մլրդ դրամի անկանխիկ գործարք: ՀՀ կառավարության 2025թ. նոյեմբերի 27-ի թիվ 1665-Լ որոշմամբ 2026թ. հունվարի 1-ից հետո կատարած անկանխիկ վճարումների համար սահմանվել է 20%, իսկ առավելագույն չափը՝ 10,000 Դրամ:

	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**905,641,984.6**	**900,468,899.1**	**873,725,928.4**	**97.0**
	այդ թվում՝				
	Վատառողջություն և անաշխատունակություն	2,587,460.3	3,240,702.1	3,088,067.0	95.3
	Վատառողջություն	317,351.0	355,890.0	338,848.3	95.2
	Անաշխատունակություն	2,270,109.3	2,884,812.1	2,749,218.8	95.3

	Ծերություն	628,138,120.8	624,176,949.9	608,012,593.5	97.4
	Հարազատին կորցրած անձինք	4,656,000.0	4,646,485.0	4,348,291.4	93.6
	Ընտանիքի անդամներ և զավակներ	127,015,320.2	123,021,626.8	119,441,327.7	97.1
	Գործազրկություն	1,761,271.2	2,921,071.2	2,014,691.6	69.0
	Բնակարանային ապահովում	11,955,005.5	14,116,449.7	12,516,826.1	88.7
	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերի չպատկանող)	12,197,308.6	12,198,130.0	11,102,050.2	91.0

2. Կրթության ոլորտի ծախսերը 2025թ. կազմել են 319.6 մլրդ դրամ և ապահովել 94.8% կատարողական: Շեղումը հիմնականում արձանագրվել է հիմնական ընդհանուր և նախադպրոցական կրթության և կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասերի ծախսերում, որոնք կատարվել են համապատասխանաբար 94.3%-ով՝ կազմելով 156.8 մլրդ դրամ, 77.4%-ով՝ կազմելով 9.5 մլրդ դրամ և 93%-ով՝ կազմելով 45.8 մլրդ դրամ: Շեղումները հիմնականում պայմանավորված են «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում», «Նախադպրոցական կրթություն», «Մասսայական սպորտ», «Կրթության որակի ապահովում» և Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերի ցածր կատարողականներով:

<u>Նախադպրոցական կրթություն</u>

Նախադպրոցական կրթության ոլորտի գերակայություններն են ենթակառուցվածքների բարելավումը, կրթության հասանելիությունն ու մատչելիության ապահովումը, կրթության բովանդակության բարելավումը, մասնագիտական կարողությունների զարգացումը և նախադպրոցական հաստատությունների կառավարման որակի բարձրացումը:

Բարելավվել է ընդգրկվածության ցուցանիշը. 2025թ. նախադպրոցական կրթության համակարգում 3-5 տարեկանների ընդգրկվածությունը կազմել է 81%՝ 2024թ. գրանցած 75% ընդգրկվածության ցուցանիշի փոխարեն: Մինչև 2027թ. նախատեսվում է ընդգրկվածությունը հասցնել 85%-ի:

<u>Հանրակրթություն</u>

2025թ. կրթության ոլորտում հանրակրթությունը շարունակել է մնալ առաջնահերթություն:

Հանրակրթության նոր չափորոշիչը 2025թ. սեպտեմբերից ներդրվել է ՀՀ բոլոր դպրոցների 1-11-րդ դասարաններում՝ զուգակցվելով նոր դասագրքերի, ուսումնական նոր բովանդակության մշակմամբ և ստեղծմամբ: Չափորոշչի ամբողջական ներդրումը կավարտվի 2026թ.:

Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր

Էապես բարձրացել է մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի գրավչությունը. եթե Կառավարության 5-ամյա ծրագրի առաջին տարում՝ 2021թ. մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվել էր 12,772 ուսանող, ապա 2025թ. ցուցանիշը կազմել է 16,497՝ 2024թ. նկատմամբ գրանցելով ընդունելության 9.5% աճ: Այսպիսով, 2025թ. դրությամբ քոլեջներում սովորել է ավելի քան 47,000 ուսանող՝ 2021թ. նկատմամբ 2025թ. ընդունելության ցուցանիշը բարելավվել է մոտ 29%-ով: Թիրախային ցուցանիշը 2027թ. համար նախատեսվում է հասցնել 32%-ի:

Բարձրագույն կրթություն

2025թ. հոկտեմբերին ուժի մեջ է մտել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքը, որն ապահովել է ինստիտուցիոնալ ներդաշնակություն ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրով սահմանված թիրախների, ինչպես նաև՝ միջազգային չափորոշիչների հետ:

ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերի արդյունքներով գործող համակարգով բակալավրի կրթական ծրագրերով բուհ է ընդունվել 10,970 առաջին կուրսեցի, որոնցից 2,074-ը՝ անվճար հիմունքներով, իսկ 8,896-ը՝ վճարովի հիմունքներով: Այս ցուցանիշը գերազանցում է նախորդ տարիների ընդունելության արդյունքները:

2025-2026 ուսումնական տարում բուհերում նպատակային ընդունելության շրջանակներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հատկացվել է ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ 11 տեղ, իսկ վճարովի համակարգ է ընդունվել 23 ուսանող:

2025թ. պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսուցման ընդունելության համար նախատեսված 2,142 ընդհանուր տեղերի թվի ավելի քան 59%-ը հատկացվել է ԲՏՃՄ ոլորտին:

Գիտություն

Գիտության ոլորտը դիտարկվում է որպես ՀՀ կայուն զարգացման անկյունաքարային ոլորտներից մեկը:

2025թ. գիտության ոլորտին հատկացվող պետական միջոցների ծավալը կազմել է 30 մլրդ դրամ: Միայն գիտական ենթակառուցվածքի արդիականացմանն ուղղված ծախսերը կազմել են 15 մլրդ դրամ, որի շրջանակում գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացման, ծրագրերի իրականացման, գիտական սարքավորումների արդիականացման, միջազգային համագործակցությանն աջակցության նպատակով 2025թ., ինչպես և 2024թ., ներգրավված է եղել 57 կազմակերպություն, ՀՀ-ն անդամակցել է 4 միջազգային գիտական կառույցի, ֆինանսավորման են երաշխավորվել երիտասարդ գիտնականների 12 դպրոց, 31 գիտական միջոցառում և 20 գործուղում:

Մշակութային ժառանգության շարունակական պահպանում և հանրահռչակում

Մշակութային ժառանգության շարունակական պահպանման, հանրահռչակման, մշակութային զբոսաշրջության զարգացման և խթանման նպատակով 2025թ. պետական բյուջեից փաստացի հատկացվել է 5 մլրդ դրամ:

Թանգարանային նմուշների պահպանության, ցուցահանդեսների կազմակերպման, մասնագետների վերապատրաստման նպատակով 2025թ. պետական ֆինանսավորումը կազմել է 2.6 մլրդ դրամ, որի արդյունքում թանգարաններն իրականացրել են 18 միջազգային ժամանակավոր ցուցադրություններ՝ նախորդ տարվա 12-ի փոխարեն՝ գերազանցելով նույնիսկ 2027թ. համար նախանշված ցուցանիշը 12.5%-ով: Գրադարաններում և թանգարաններում իրականացվել է 2,292 կրթամշակութային ծրագիր, որոնց մասնակցել է 48,502 այցելու՝ գերազանցելով անգամ 2027թ. սահմանված ,32,000 շահառուն թիրախային ցուցանիշը:

Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն

2025թ. իրականացվել են 19 հուշարձանների՝ ամրակայման, նորոգման և վերականգնման, 5 հուշարձանների ուսումնասիրման, հետախուզումների և պեղումների աշխատանքներ, որի համար ՀՀ պետական բյուջեից 2025թ. հատկացվել է 1.4 մլրդ դրամ՝ գերազանցելով 2024թ. նույն ցուցանիշը 72.9%-ով:

Պետություն-մասնավոր համագործակցությամբ վերականգնվել է 8 հուշարձան, որից մեկի աշխատանքներն ավարտվել են, 7-ի աշխատանքները շարունակվում են 2026թ.:

Վերականգնված հուշարձանը հանրապետական նշանակության՝ Երևանի ,Կարմիր կամուրջ հուշարձանն է, որը Երևանում պահպանված ամենահին կամուրջն է:

Սպորտ

Ոլորտի գերակա ուղղություններից մեկը ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստումը և առաջնությունների անցկացումն է: Այս ուղղությամբ պետական աջակցության ծրագրում ընդգրկված 35 մարզական ֆեդերացիաներն անցկացրել են ՀՀ 100 առաջնություն, 141 ուսումնամարզական հավաք և մասնակցել 174 միջազգային մրցաշարերի:

	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	**299,723,530.6**	**337,328,126.8**	**319,633,165.9**	**94.8**
	այդ թվում՝				
	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	56,474,164.2	55,412,209.1	52,625,182.6	95.0
	Նախադպրոցական կրթություն	13,964,457.1	12,265,009.5	9,491,746.8	77.4
	Տարրական ընդհանուր կրթություն	42,509,707.1	43,147,199.6	43,133,435.8	100.0
	Միջնակարգ ընդհանուր կրթություն	162,092,737.6	195,118,901.0	185,504,281.1	95.1
	Հիմնական ընդհանուր կրթություն	134,869,755.7	166,196,686.4	156,761,225.8	94.3
	Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն	27,222,981.9	28,922,214.6	28,743,055.3	99.4
	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	13,576,884.4	13,614,961.4	12,665,452.2	93.0
	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	4,105,499.8	4,018,037.7	3,617,643.9	90.0
	Միջին մասնագիտական կրթություն	9,471,384.6	9,596,923.7	9,047,808.3	94.3

	Բարձրագույն կրթություն	15,998,586.8	14,935,740.7	14,651,684.7	98.1
	Բարձրագույն մասնագիտական կրթություն	14,842,544.6	13,950,005.7	13,747,001.3	98.5
	Հետբուհական մասնագիտական կրթություն	1,156,042.2	985,735.0	904,683.3	91.8
	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	6,224,269.4	6,050,451.3	5,771,140.4	95.4
	Արտադպրոցական դաստիարակություն	5,078,803.1	4,829,757.3	4,676,506.5	96.8
	Լրացուցիչ կրթություն	1,145,466.3	1,220,694.0	1,094,633.9	89.7
	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	42,995,684.7	49,276,907.6	45,835,662.4	93.0
	Կրթություն (այլ դասերի չպատկանող)	2,361,203.5	2,918,955.7	2,579,762.6	88.4
	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	**47,426,039.1**	**49,596,766.9**	**42,775,070.9**	**86.2**
	այդ թվում՝				
	Հանգստի և սպորտի ծառայություններ	13,082,294.8	13,449,401.3	8,327,652.7	61.9
	Հանգստի և սպորտի ծառայություններ	13,082,294.8	13,449,401.3	8,327,652.7	61.9
	Մշակութային ծառայություններ	19,925,520.0	21,622,966.5	20,135,277.9	93.1
	Գրադարաններ	1,749,969.0	1,757,228.1	1,678,571.1	95.5
	Թանգարաններ և ցուցասրահներ	3,464,831.8	3,450,873.8	3,189,883.8	92.4
	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	273,880.6	187,198.2	150,949.8	80.6
	Այլ մշակութային կազմակերպություններ	664,196.0	664,196.0	660,242.0	99.4
	Արվեստ	11,033,978.6	12,643,072.3	11,957,244.5	94.6
	Կինեմատոգրաֆիա	786,533.6	766,570.8	754,188.0	98.4
	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	1,952,130.4	2,153,827.3	1,744,198.7	81.0

	Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ	11,050,938.6	11,170,895.1	11,100,106.0	99.4
	Հեռուստառադիոհաղորդումներ	9,152,743.7	9,283,512.5	9,234,497.0	99.5
	Հրատարակչություններ, խմբագրություններ	891,676.1	880,863.8	859,090.1	97.5
	Տեղեկատվության ձեռքբերում	1,006,518.8	1,006,518.8	1,006,518.8	100.0
	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	3,367,285.7	3,353,504.0	3,212,034.4	95.8
	Երիտասարդական ծրագրեր	2,782,611.0	2,784,254.3	2,692,011.5	96.7
	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ,արհմիություններ	584,674.7	569,249.7	520,022.9	91.4

3. Առողջապահություն

Ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղվել է հանրային առողջապահական ծառայությունների հզորացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, առողջ կենսակերպի համար պայմանների ստեղծմանը:

Պետական առողջապահական ծախսերի նպատակայնության հետևողական բարձրացման, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման և մատուցվող ծառայությունների որակի կառավարման գործուն մեխանիզմների շարունակական բարելավման շնորհիվ առողջապահական համակարգի շահառուն ստիպված չի եղել հավելյալ վճարել պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող ծառայությունների համար և ստացել է որակյալ բժշկական օգնություն և ծառայություններ: Անվճար բժշկական օգնությունը տրամադրվել է միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա:

Բնակչության առողջության առաջնային պահպանումը ռազմավարական կարևոր ուղղություն է, որն ապահովելով առաջնային օղակի դերի բարձրացումը և մատուցվող

ծառայությունների որակի բարելավումը՝ ապահովել է որակյալ և մատչելի առաջնային բուժօգնություն, ինչպես նաև սոցիալական արդարության և հավասարության սկզբունքներ հանրապետության ողջ բնակչության համար՝ անկախ սեռից ու տարիքից: 2025թ. նշված ուղղության համար որպես թիրախային ցուցանիշ է սահմանված եղել բնակչության ընդգրկվածության տոկոսն ամբուլատոր բժշկական հաստատություններում՝ 98%, փաստացի ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 99%:

Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի (տեղամասային թերապևտ, մանկաբույժ, ընտանեկան բժիշկ) գործառույթներն առավելագույնս ուղղվել են հիվանդությունների կանխարգելմանն ու վաղ հայտնաբերմանը:

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց տրամադրվել է անվճար կամ արտոնյալ պայմաններով հիվանդանոցային/մասնագիտացված անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում: Սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ: Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային պայմաններում բուժման միջամտություններում կիրառվել են նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներ, ինչպես նաև առանձին միջոցներ, էնդոպրոթեզներ, իմպլանտներ և կլիպսներ, 2025թ. միջոցառումն ընդլայնվել է և ընդգրկել ավելի մեծ թվով շահառուներ:

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը ռազմավարական մեկ այլ կարևոր նպատակ է, որի շրջանակներում ապահովվել է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերումը, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավումը և այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատումը, ինչպես նաև վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցումը, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխումը և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովումը:

Մոր և մանկան առողջության պահպանման ապահովում: Մոր ու մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավման ոլորտում կառավարությունը նպաստել է մոր և մանկան առողջության ցուցանիշների բարելավմանը՝ ուղղորդված առողջապահական ծրագրային միջոցառումների իրականացման միջոցով ապահովելու

մոր ու մանկան առողջության առաջնային պահպանման համակարգում կանխարգելիչ ծրագրային ուղղությունների ուժեղացումը: Նշված ուղղությամբ որպես 2025թ. թիրախային ցուցանիշներ են սահմանված եղել.

- Մինչև 5 տարեկան երեխաների մահացության մակարդակ (մահեր 1000 կենդանածնի հաշվով)՝ 7.5, փաստացի ցուցանիշը կազմել է 8.2,
- Մանկական (0-1 տարեկան) մահացության մակարդակ (մահեր 1000 կենդանածնի հաշվով)՝ 6.7, փաստացի ցուցանիշը կազմել է 6.8,
- Մայրական մահացության մակարդակ (մահեր 100000 կենդանածնի հաշվով (միջին եռամյա ցուցանիշ))՝ 22, փաստացի ցուցանիշը կազմել է 11.6:

Հղիների նախածննդյան և ծննդյան որակյալ բուժօգնության տրամադրման, կանանց, հղիների և նորածինների լայնածավալ սքրինինգային ծրագրերի, կանանց համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների դեպքերի վաղ հայտնաբերման և կանխարգելման, երեխաների պատվաստումներում ընդգրկվածության մեծացման արդյունքում զգալիորեն կրճատվել են պերինատալ (շուրջծննդյան) և մայրական մահացության ցուցանիշները, ընդլայնվել է սկրինինգային ծրագրերի իրականացումը, բարելավվել է նախածննդյան, ծննդօգնության և վերարտադրողական առողջության ծառայությունների անհրաժեշտ ծավալների ու մատչելիության ապահովումը՝ ուղղված մայրական, շուրջծննդյան (պերինատալ) հիվանդացության ու մահացության ցուցանիշների նվազեցմանը, ինչպես նաև կանանց վերարտադրողական առողջության բարելավմանը:

	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	**168,087,897.3**	**172,719,189.6**	**165,784,385.1**	**96.0**
	այդ թվում՝				
	Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	5,759,668.5	7,283,521.9	6,907,777.8	94.8
	Դեղագործական ապրանքներ	5,369,418.5	6,939,271.9	6,828,788.3	98.4
	Բժշկական սարքեր և սարքավորումներ	390,250.0	344,250.0	78,989.5	22.9
	Արտահիվանդանոցային ծառայություններ	41,681,300.0	43,019,840.0	43,018,171.3	100.0
	Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ	30,600,000.0	31,566,040.0	31,565,107.9	100.0

	Մասնագիտացված բժշկական ծառայություններ	4,880,000.0	4,919,000.0	4,918,680.2	100.0
	Ստոմատոլոգիական ծառայություններ	601,300.0	609,800.0	609,720.1	100.0
	Պարաբժշկական ծառայություններ	5,600,000.0	5,925,000.0	5,924,663.1	100.0
	Հիվանդանոցային ծառայություններ	95,488,403.0	97,294,110.0	96,562,710.5	99.2
	Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ	57,588,403.0	55,013,610.0	54,286,472.1	98.7
	Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ	15,130,000.0	16,729,500.0	16,725,442.8	100.0
	Մոր և մանկան բժշկական ծառայություններ	22,770,000.0	25,551,000.0	25,550,795.6	100.0
	Հանրային առողջապահական ծառայություններ	7,372,578.8	6,801,647.6	6,788,183.4	99.8
	Հանրային առողջապահական ծառայություններ	7,372,578.8	6,801,647.6	6,788,183.4	99.8
	Առողջապահություն (այլ դասերի չպատկանող)	17,785,947.0	18,320,070.1	12,507,542.1	68.3
	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	4,040,454.8	5,013,195.7	4,556,261.7	90.9
	Առողջապահություն (այլ դասերի չպատկանող)	13,745,492.2	13,306,874.4	7,951,280.4	59.8

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. Մարկոսյան

Կատարող՝ Ա. Գալստյան (հեռ. 011-513-235), (12-35)

08.05.2026թ.